# Աշխարհի չեմպիոն Տիգրան Երկաթ

## ԼՐԱՑԱՎ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԸ



*Իր "Տիգրան Երկաթ" մականունը շախմատի գծով աշխարհի իններորդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանը ստացել է պաշտպանության հիանալի արվեստի համար: Իսկ "Շախմատային ձախլիկ" մականունը դարձել է նրա արբանյակը խաղի արտասովոր ոճի պատճառով, որը տասնամյակներ շարունակ կարողանում էր փակուղու առաջ կանգնեցնել նույնիսկ ամենափորձված հակառակորդներին:*

Տիգրան Վարդանի Պետրոսյանը ծնվել է 1929 թվականի հունիսի 17-ին Թբիլիսիում: Բախտը նրան երես չի հանել, նրա մանկությունը դառն է եղել: Տիգրանը մորից զրկվել է վաղ հասակում, որոշ ժամանակ անց մահացել է նաև հայրը:

1940-ական թվականների սկզբներին Տիգրանը լրջորեն հրապուրվել է շախմատով՝ հաճախելով Թբիլիսիի պիոներների տան սեկցիայի պարապմունքներին: Նրա մարզիչն է եղել Կապաբլանկայի մեծ երկրպագու Ա. Էբլարիձեն: Մարզիչի այդ հրապուրանքը փոխանցվել է նաև աշակերտին, որը ամբողջ կյանքում եղավ կուբացի մեծ շախմատիստի խաղաոճի սիրահար, ստեղծելով իր սեփական աննախադեպ խաղաոճը:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո 16-ամյա Տիգրանը բռնեց շախմատային աշխարհում իր փառքի վերելքի ուղին: Իր մասին նա բարձրաձայն հայտարարեց ՍՍՀՄ պատանեկան առաջնությունում 1945 թվականին, կրկնելով այդ հաջողությունը նաև հաջորդ տարի: Հինգ տարի հետո Տիգրանը տեղափոխվեց Մոսկվա, դառնալով մրցանակակիր ՍՍՀՄ առաջնությունում և Եֆիմ Գելլերի հետ բաժանելով երկրորդ-երրորդ տեղերը:

1953 թվականին Տիգրան Պետրոսյանը դարձավ աշխարհի առաջնության հավակնորդների տուրնիրի մասնակից Ցյուրիխում՝ գրավելով պատվաբեր 5-րդ տեղը:

Մի քանի տարի անց Պետրոսյանը լրջորեն սկսեց զբաղվել շախմատային Օլիմպի նվաճման գործով: Նա երկու անգամ (1959 և 1961 թվականներին) կարողացավ դառնալ հաղթող ՍՍՀՄ առաջնությունում՝ ցուցաբերելով վերջնախաղի բարձրագույն տեխնիկա և դիրքերի հիանալի հասկացում, ինչպես նաև պաշտպանության գերազանց վարպետություն:

Նրա աստղային ժամը դարձավ աշխարհի առաջնության հավակնորդների 1962 թվականի տուրնիրը, որը տեղի ունեցավ Կյուրասաո կղզում: Այդ մրցումներում Պետրոսյանը հասավ արտակարգ արդյունքի: Նա չպարտվեց 27 պարտիաներից ոչ մեկում, գրավելով 1-ին տեղը և ստանալով աշխարհի գործող բազմամյա չեմպիոն Միխայիլ Բոտվիննիկի հետ մատչ խաղալու իրավունք:

Բոտվիննիկի հետ այդ անչափ հետաքրքիր մատչը տեղի ունեցավ Մոսկվայում 1963 թվականին՝ դարձնելով 33-ամյա Տիգրան Պետրոսյանին շախմատի գծով աշխարհի նոր չեմպիոն: Երիտասարդ շախմատիստը հաղթեց մենամարտում աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկին: Ինչպես և իր շախմատային կուռք Խոսե Ռաուլ Կապաբլանկան, Պետրոսյանը վեց տարի մնաց աշխարհի չեմպիոն: 1969 թվականին, լինելով առողջական վատ վիճակում, նա թագը զիջեց Բորիս Սպասսկուն, որին հաղթել էր նախորդ մատչում 1966 թվականին:

Դեռ երկար տարիներ Տիգրան Պետրոսյանը մնաց աշխարհի ուժեղագույն շախմատիստների շարքում: 1969 և 1975 թվականներին նա դարձավ Սովետական Միության չեմպիոն, հաղթում էր միջազգային խոշոր մրցումներում և հավակնորդների տուրնիրներում: 50 տարեկան հասակում նա հաղթանակ տարավ միջզոնալ տուրնիրում Խյուբների և Պորտիշի հետ:

Տիգրան Պատրոսյանը սահմանել է բազմաթիվ տպավորիչ ռեկորդներ: Նա կարողացել է անցկացնել ՍՍՀՄ 6 առաջնություն, չկրելով ոչ մի պարտություն: Խաղալով Սովետական Միության հավաքականի կազմում 1958-ից 1978 թվականը անցկացված շախմատային համաշխարհային 10 Օլիմպիադաներում, Պետրոսյանը ցուցաբերեց ուղղակի ցնցող արդյունքներ՝ 79 հաղթանակ, 50 ոչ-ոքի և միայն 1 պարտություն: Իր լավագույն տարիներին Տիգրան Պետրոսյանին հաղթելը անհնարին էր: Շախմատում նա ամենաշատը գնահատում էր տրամաբանությունը, ասելով, որ սպորտի այդ տեսակում չկա պատահական ոչ մի բան:

Հիանալի խաղին զուգընթաց Պետրոսյանը մեծաթիվ հոդվածների հեղինակ էր, զբաղեցնում էր "64" և "Շախմատային Մոսկվա" հանդեսների գլխավոր խմբագրի պաշտոնը, ինչպես նաև բացել էր իր սեփական շախմատային դպրոցը՝ դառնալով լավագույն մարզիչներից մեկը:

1964 թվականին Արպադ Էլոն լույս ընծայեց շախմատիստների առաջին ոչպաշտոնական միջազգային ցուցակը՝ կազմված ըստ Էլոյի ռեյտինգի: Այդ ցուցակը գլխավորեցին Տիգրան Պետրոսյանը և Ռոբերտ Ֆիշերը՝ ունենալով ռեյտինգի 2690-ական միավոր: Էլոյի ռեյտինգի պաշտոնական ընդունումից հետո Պետրոսյանը գտնվում էր աշխարհի լավագույն շախմատիստների վեցնյակում 1970-1972, 1974-1977, ինչպես նաև 1980 թվականներին: Ըստ Կին-Դիվինսկու վերսիայի (ընդգրկում է 18-րդ դարից մինչև 1987 թիվը) Պետրոսյանը գտնվում էր աշխարհի նոր ժամանակների լավագույն շախմատիստների ցուցակի առաջին տասնյակում: Այդ կոչումը հաստատում է Իրվինգ Չեռնյովի, ինչպես նաև Գուդ-Բրատկոյի "նվազագույն սխալների" համակարգչային մեթոդը՝ համեմատելով շախմատիստների քայլերը համակարգչային բարդ ծրագրի քայլերի հետ:

Շախմատային հաղթանակներից և հոդվածներ գրելուց բացի, Տիգրան Պետրոսյանը դարձավ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, 1968 թ. պաշտպանելով "Շախմատային մտածողության տրամաբանական որոշ պրոբլեմներ" թեմայով դիսերտացիա:

Մահացել է Տիգրան Պետրոսյանը 55 տարեկան հասակում 1984 թվականի օգոստոսի 13-ին Մոսկվայում: Թաղված է տեղի հայկական գերեզմանոցում: Մահվանից հետո լույս է տեսել նրա "Հուսալիության ստրատեգիան" մեծարժեք գիրքը:




*Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տունը Երևանում:*


## Սիրելի ընթերցողներ, շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2014 թվականի 2-րդ կիսամյակի համար:

**Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում: Վեց ամսվա համար բաժանորդագրության գինը կազմում է 348 ռուբլի 42 կոպեկ:**